«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սաների հայրենաճանաչության ձևավորման կարևորությունը

Դաստիարակ՝ Սիրանուշ Կարապետյան

Մանկապարտեզ՝ «Արենի համայնք Ռինդի մանկապերտեզ» ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն----------2

ԳԼՈՒԽ 1 ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ----------4

1.1 Հայրենաճանաչություն, հայրենասիրություն----------4

1.2 Իմ հայրենիքը----------6

1.3 Գյուղը և քաղաքը որպես հայրենիք----------7

ԳԼՈՒԽ 2 ՊԱՐԱՊՄՈՒՆՔ----------9

Դիտարկում տնօրենի կողմից----------12

Եզրակացություն----------13

Օգտագործված գրականության ցանկ----------14

Ներածություն

Սերը դեպի հայրենիքը քաղաքակիրթ մարդու առաջին արժանիքն է։

Նապոլեոն Բոնապարտ

Մեր հարենիքում մեզ սպանեցին,

Բայց հայրենիքը մեր մեջ չսպանեցին. . .

Պարույր Սևակ

Մեր երկիրը ավերակների երկիր է, ավերված մի հայրենիք, որ մենք այսօր կամենում ենք կենդանացնել, որին կամենում ենք նոր կյանքի կոչել։ Մեր հոգևոր հայրենիքը նույնպես ավերված մի երկիր է և այդ ավեր ու անավեր շենքը կանգնեցնելու համար որպիսի՜ ջերմ սեր, որպիսի՜ անձնվիրություն, որպսիս՜ բուռն ոգևորություն է հարկավոր։

Վահան Տերյան

Հետազոտական աշխատանքի համար ընտրել եմ <<Սաների հայրենաճանաչության ձևավորման կարևորությունը>> թեման, քանի որ կարծում եմ մեր՝ հայրենիքի համար, սա շատ կարևոր թեմա է բոլոր ժամանակներում և տարիքային բոլոր խմբերում։ Ով կարծում եմ, որ դեռ մանկապարտոզից պետք է սկսենք երեխաների մեջ սերմանել սեր հայրենիքի նկատմամբ։

Սիրելով և հարգելով իրենք իրենց, ծնողներին, քույրերին, եղբայրներին, տատիկ-պապիկներին, դիմացինին, կսիրեն ու կհարգեն նաև հայրենիքը։

Հոգատար վերաբերմունք ցուցաբերելով շրջակա միջավայրի՝ տան, բակի, գյուղի, քաղաքի, մանկապարտեզի, իրենց իրերի նկատմամբ հոգատար և պատասխանատու կլինեն նաև հայրենիքի նկատմամբ։

Ուսումնասիրելով հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական պատմությունը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունները, ձեռքբերումները, ստեղծած արժեքների և համամարդկային նվաճումների, ինչպես նաև այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարությունների և կորուստների մասին, երեխաների հիշողության մեջ ամրապնդվում է հայրենասիրությունը։ Հենց այս

պատճառով է, որ կրթական բոլոր ոլորտներում՝ սկսած մանկապարտեզներից, դպրոցներից պետք է դրվի հայրենաճանաչության հարցը։ Անցկացնելով հայրենաճանաչության դասեր, պարապմունքներ, էքսկուրսիաներ կունենանք հայրենասերներ։

Այս թեմայի ուսուցման ընթացքում, սաները կստանան գիտելիքներ մեծ և փոքր հայրենիքների, նրանց մշակույթի, պատմական հուշարձանների, բերդերի ու ամրոցների, եկեղեցիների և այլնի մասին։ Պատկերացում կկազմեն մեր հայրենիքի խորհրդանիշների և հարևան երկրների մասին։

ԳԼՈՒԽ 1 ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

1.1 Հայրենաճանաչություն, հայրենասիրություն

Հայրենաճանաչությունը իր մեջ ներառում է տաստիարակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն։

Հայրենիքը ճանաչելու իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները , հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը։ Պետք է ճանաչել հայրենիքը, որպեսզի կարողանալ այն սիրել։

Հայրենաճանաչությունը բարոյական և հայրենասիրական կրթություն է։ Հայրենաճանաչության արժեքային համակարգի ձևավորումը պետք է դրվի ընտաիքում և մանկապարտեզում։ Հայրենաճանաչությունից է սկսվում հայրենասիրությունը։

Հայրենասիրությունը բարդ երևույթ է, նրա էությունը կապվում է ոչ միայն առանձին քաղաքական կամ բարոյական սկզբունքի, այլև նրա առանձնահատկությունների ինտեգրատիվության հետ, ինչը թույլ է տալիս հայրենասիրությունը դիտարկել որպես անձի սոցիալ-բարոյական ուղղվածության անբաժանելի մաս։

Հայրենասիրության կառուցվածքում առանձնանում են մի քանի փոխկապակցված բաղադրատարրեր՝ մտավոր, պահանջմունքա-շարժառիթային, հուզակամային և գործնական։

Հայրենասիրության բովանդակության մեջ իրենց արտացոլումն են գտնում <<Մայր հող>> և <<Հայրենիք>> հասկացությունները։ Առաջինը բնորոշում է մարդու բական կապվածությունը հարազատ հողին։ Երկրորդը պայմանավորված է որոշակի հասարակական հարաբերություններով, երկրի տնտեսական, քաղաքական, մշակութային առանձնահատկություններով։

Մեր երկրում տեղի ունեցող արմատական վերափոխումներն իրենց հետքն են թողնում հասարակության կյանքի տարբեր ոլորտների, այդ թվում է երիտասարդ սերնդի վրա, ինչը ձևավորում է ժամանակակից պայմաններում հայրենասիրության բովանդակության առանձնահատկությունների բացահայտման անհրաժեշտությունը:

Ժամանակակից պայմաններում հայրենասիրության բովանդակության կարևոր առանձնահատկությանն է նրա միտվածությունը դեպի ապագան: Իր հայրենիքին նվիրված մարդն անմիջականորեն մասնակցում է նրա առջև ծառայած խնդիրների լուծմանը: Տնտեսության վերելքը, ժողովրդավարական պետության կայացումը ուղղակիորեն կախված են հասարակության անդամի՝ իր հայրենասիրական պարտքի կատարումից, որն իրականացվում է ոչ միայն հերոսական արարքների միջոցով, այլ նաև ամենօրյա գործերով: Դա պայմանավորում է ժամանակակից հայրենասիրության ևս մեկ առանձնահատկություն. իսկական հայրենասիրությունն անանց բնույթ ունի և դասվում է համամարդկային արժեքների շարքը:

Հայրենասիրական դաստիարակությունը դաստիարակների և սաների փոխգործակցության գործընթաց է, որն ուղղված է հայրենասիրական զգացմունքներիձևավորմանը:

Հայրենասիրությունը, եթե նկատի ունենանք ծագումը, առաջանում և զարգանում է որպես զգացմունք, որն ավելի ու ավելի սոցիալականացվում և վեր հառնում հոգևոր-բարոյական հարստացման միջոցով: Հայրենասիրական զգացմունքի ըմբռնումը անբաժանելիորեն կապված է նրա գործունեության հետ, ինչն առավել կոնկրետ պլանով դրսևորվում է ակտիվ սոցիալական գործունեությամբ, գործողություններով և արարքներով, որ կատարվում են մարդու կողմից ի բարօրություն հայրենիքի:

Հայրենասիրությունը բնույթով որպես խորապես սոցիալական երևույթ, հասարակության գոյության և զարգացման հզոր աղբյուր է, հանդես է գալիս որպես մարդու կենսունակության, իսկ երբեմն էլ նրա կենսականության բնութագրիչ:

Հայրենասիրության բնորոշ դրսևորումներից մեկը հզոր պետականության երազանքն է: Այն արտացոլում է մեր հասարակության պատմական զարգացման յուրահատկությունը: Այդպիսի հայրենասիրության կարևոր գործոն է պետությունը: Ներկայումս հայ հասարակության զարգացման, ժամանակակից պետության ստեղծման համար կարևորագույն պայման է համարվում հայրենասիրության վերածնունդը:

Իսկական հայրենասիրությունը նրա հոգևոր բնույթի մեջ է: Հայրենասիրությունը կարևորագույն գործոն է սոցիալական խմբում անձի առավել լիարժեք դրսևորման համար: Այն ենթադրում է հայրենիքին անշահախնդիր, անմնացորդ ծառայություն:

Ելնելով այս ամենից՝ կարելի է ընդհանրացնել հայրենասիրության առավել էական կողմերը և սահմանել այն:

Հայրենասիրությունը անձի առավել նշանակալից բարոյական արժեքներից, անատի կարևորագույն հոգևոր ձեռքբերումը, որը բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և արտայայտվում է ինքնադրսևորման ակտիվ գործունեությամբ՝ ի բարօրություն հայրենիքի:

Հայրենասիրություն մարմնավորում է սերը սեփական հայրենիքի հանդեպ: Այն սերտ առնչություններ ունի հայրենիքի պատմության, մշակույթի, նվաճումների հետ և կազմում է մարդու հոգևոր-բարոյական հիմքը: Այն ձևավորում է անհատի քաղաքացիական դիրքորոշումը, հայրենիքին արժանիորեն ծառայելու պահանջմունքը: Հայրենասիրությունը հասրական և պետական կառույցի, մարդու և հասարակության կենսունակության գաղափարախոսական հիմքն է:

1.2 Իմ հայրենիքը

Հայրենի՛ք, թանկ ու հարազատ բառ, որ լսել ենք վաղ մանկության տարիներից: Սա այն երիրն է, որտեղ առաջացել, կազմավորվել, հազարամյակներ շարունակ ապրել ու արարել է հայ ժողովուրդը, որտեղ ծնվել և ապրում ենք մենք՝ մեր ծնողների, հարազատների, մտերիմների ուբարեկամների հետ: Հայրենիքը մեր տունն է, մեր օջախը: Եվ որքան լավ ենք ճանաչում, այնքան ավելի շատ ենք սիրում,

զարմանում ու վեհանում նրա հրաշք գեղեցկությամբ, մշակույթով, անմահ կոթողներով ու հուշարձաններով, այնքան ավելի ենք հասկանում, որ կա շատ թանկ մի բան, որին պետք է նվիրվել ամբողջ էությամբ: Ահա այդ ճանաչողությանն է ուղղված <<Իմ հայրենիքը>> թեման, որի բովանդակությունը կազմում են հայոց հայրենիքը, հայ ժողովրդի ծագումնաբանությունը, կյանքը, կենցաղը, մշակույթը, ավանդապատումները, <<Սասնա ծռեր>> էպոսը:

Հայրենիքը պատմական այն տարածքն է, որտեղ առաջացել, կազմավորվել և իր պամությունն է կերտել տվյալ ժողովուրդը:

Հայ ժողովրդի հայրենիքը Հայաստանն է (Հայկական լեռնաշխարհը), որն այդպես է կոչվել՝ մեր քաջ նախնի Հայկ Նահապետի անունով: Օտարները Արամի (Հայկի սերնդից) անունով մեր երկիրն անվանում են Արմենիա: Հայաստանը, որն անցյալում մեծ ու ընդարձակ երկիր էր, այսօր զբաղեցնում է մեր պատմական հայրենիքի միայ հյուսիսարևելյան հատվածը, որտեղ ձևավորել է հայակական երկու պետություն Հայաստանի Հանրապետությունը և Արցախի Հանրապետությունը:

Մենք պետք է մշտապես հիշենք ու իմանանք մեր հայրենիքի անցյալը, խորությամբ ճանաչենք ու սիրենք Հայաստան աշխարհը, նրա բնությունը, հողն ու ջուրը:

<<Ով չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող ճշմարտորեն սիրել այն>>,- ասել է հայ մեծանուն գրող Ռաֆֆին:

1.3 Գյուղը և քաղաքը որպես հայրենիք

Եթե փորձենք պարզել, թե որտեղից է սկսվում հայրենիքը, ապա մեզանից շատերը, առանց հապաղելու, մատնացույց կանեն ծննդավայրը՝ հարազատ գյուղը կամ քաղաքը: Գյուղում ապրողները հայրենի աշխարհը պատկերացնու են իրենց ծննդավայրի տեսքով՝ այգիների ու դաշտերի բույրեվ, իմաստուն ծերունիներով, գյուղամիջի եկեղեցիով, հերոսների հուշարձանով և շատ ու շատ գեղեցիկ այլ պատկերներով: Հետագայում փոքր հայրենիքը դրոշմվում է մեր հոգու մեջ, և այստեղից էլ մեզ համար սկսվում է հայոց աշխարհը՝ մեծ հայրենիքը:

Քաղաքում ապրող երեխաներն էլ իրենց փոքր հայրենիքը պատկերացնում են իրենց բակի, այգու, թաղամասի, հրապարակի, դպրոցի, ցայտաղբյուրի, աղմկոտ փողոցների տեսքով։

Այսպիսով մեր փոքրիկ հայրենիքի՝ հայրենի գյուղի և քաղաքի պատկերներով է ձևավորվում մեր ամբողջական մեծ ու հզոր հայրենիքի գեղեցիկ նկարագիրը։

Ժամանակի ընթացքում սկսում ենք գիտակցել, որ անկախ ծննդավայրից, մենք բոլորս էէլ զավակն ենք մեր մեծ հայրենիքի, որի մասն են կազմում ՀՀ-ն ու ԱՀ-ն։ Աստիճանաբար ճանաչելով հայրենիքը՝ մենք սկսում ենք անսահման սիրել և հարկ եղած դեպքում կյանքիգնով պաշտպանել այն։

Հայրենիքը սրբություն է, Գարեգին Նժդեհի արտահայտությամբ՝ <<հավիտենական արժեք>>, իսկ նրա պաշտպանությունը յուրաքանչյուր հայի սրբազան պարտքն է։

ԳԼՈՒԽ 2 ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Թեմա՝ <<Իմ հայրենիքը և նրա խորհրդանիշները>>

Պարապմունքն անցկացվել է կրտսեր II խմբում։

Տեսակը՝ զրույց, ԽԻԿ համակարգ։

Նպատակը՝

1. Ամրապնդել երեխաների գիտելիքները՝ Հայաստանի Հանրապետության վերաբերալ
2. Ծանոթացնել ՀՀ դրոշին, օրհներգին, զինանշանին
3. Զբոսանքի միջոցով ծանոթացնել տարբերակել մեծ և փոքր հայրենիքը
4. Արթնացնել հայրենասիրական զգացմունքներ
5. Զարգացնել կապակցված խոսք կառուցելու հմտություններ, բառապաշարը

Ակնկալվող վերջնարդյունք՝

1. Կամրապնդվեն երեխաների գիտելիքները՝ ՀՀ-ի վերաբերյալ
2. Կծանոթանան ՀՀ խորհրդանիշներին
3. Կիմանան, որ հայրենիքը մեկն է, որում կա մի փոքրը, որտեղ մենք ապրում ենք
4. Կսիրեն հայրենիքը
5. Կզարգանա կապակցված խոսքը, բառապաշարն ու ճանաչողությունը։

Անհրաժեշտ պարագաներ՝ ՀՀ դրոշ, զինանշան, քարտեր, ՀՀ քարտեզ։

Կապը չափորոշիչի հետ՝ ԽՀ (ա, գ, դ, ե, է), Ի (ա, բ, գ, դ, է), ԻԱԱ (ա, ե), ՀՍԱ (ա, գ, զ)։

Պարապմունքի ընթացքը։

Առավոտից հնչում է ՀՀ օրհներգը, հայրենիքի մասին երգեր, խմբասենյակում դրված է ՀՀ դրոշը, քարտեզը, զինանշանը։

Դաստիարակ – Երեխանե՛ր, դուք առավոտից լսում եք երգեր։ Կասեք ինչի՞ մսին էին դրանք։

Երեխաներ – Հայրենիքի, Հայաստանի։

Դաստիարակ – Կեցցե՛ք, իսկ ի՞նչ է հայրենիքը, Հայաստանը։

Երեխաներ- Ես ապրում եմ Հայաստանում։ Հայրիկս, մայրիկս ապրում են Հայաստանում։ Տատիկս, պապիկս ապրում են հայաստանում։

Դաստիարակ- Շատ ապրեք։ Այսպիսով՝ երեխանե՛ր, այն վայրը, որտեղ մենք ապրում ենք մեր հարազատների հետ կոչվում է հայրենիք և այն անվանում ենք Հայաստան, իսկ մենք կոչվում ենք հայ։

Իսկ դուք գիտեք, որ յուրաքանչյուր երկիր ունի իր խորհրդանիշները, որոնցով ներկայանում են աշխարհում։ Դրանք են՝ օրհներգը, դրոշը, զինանշանը։

I երգը, որ դուք լսեցիք դա մեր օրհներգն է (մի հատված նորից լսում ենք), այն լսելիս պետք է ոտքի կանգնել։

Սա մեր դրոշն է (ցույց եմ տալիս դրոշը)։

- Քա՞նի գույն ունի։
- Երեք։
- Ո՞ր գույներն են։
- Կարմիր, կապույտ, նարնջագույն;
- Իսկ դուք գիտեք, որ յուրաքանչյուր գույն ունի իր նշանակությունը։ Կարմիրը՝ հայ ժողովրդի թափած արունն է, հաղթանակը։ Կապույտը գույնը՝ խաղաղ երկինքն է։ Նարնջագույնը խորհրդանշում է հայ ժողովրդի արարչական տաղանդը և աշխատասիրությունը։

Խաղ՝ <<Ճանաչիր քո գույնը>>

Երեխաները 1-3 հաշվելով բաժանվում են 3 խմբի, յուրաքանչյուր խբի առջև դրված է տուփով գունավոր քարեր։ Տուփից հանում են այն գույնի քարտը, որը կար մեր դրոշի վրա։ I խումբը հանում է կարմիրը, II-ը՝ կապույտը, III-ը՝ նարնջագույնը։ Յուրաքանչյուր խումբ ասում է , թե ինչ է խորհրդանշում այն։

- Երեխանե՛ր, ձեզ դուր եկա՞վայսօրվա մեր զրույցը։ Ի՞նչ նոր բան իմացաք։

- Լսեցինք օրհներգը, իմացանք որն է մեր դրոշը, գույները, ինչ են խորհրդանշում դրանք (իսկ զիանանշանի մասնի կսովորեն հաջորդ դասին)։

Օրվա երկրերդ կեսին՝ երեխաների զբոսանքի ժամին, ցույց ենք տալիս երեխաներին մանկապարտեզի շրջակայքը և բացատրում նրանց, որ սա էլ մեր փոքր այրենիքն է՝ մեծ հայրենիքի մի մասը։ Եվ պետք է հոգատար լինենք ու սիրենք ինչպես մեր շրջակայքը, այնպես էլ ամբողջ հայրենիքը։

Դիտարկում տնօրենի կողմից

Պարապմունքը համապատասխանում է տարիքային խմբին։ Ընտրված էին անհրաժեշտ նյութեր։ Կիրառվել է մեթոդներ, խաղի միջոցով ամրապնդվել է երեխաներին տրված գիտելիքները։ Օրվա II կեսին զբոսանքի միջոցով ավելի պատկերավոր ձևով բացատրվել է մեծ և փոքր հայրեիքների իմաստը։

Երեխաները ոգևորված էին, շատ ուրախ էին։

Դաստիարակը կարողացավ հասնել իր նպատակին՝ տալ գիտելիքներ հայրենիքի, նրա խորհրդանիշերի մասին, հարստացնել բառապաշարը և որ ամենակարևորն է սեր, հոգատար վերաբերմունք իրենց շրջապատի նկատմամբ։

Զբոսանքի ընթացքում առաջարկեցի խնամեն մանկապարտեզի բակում գտնվող ծաղիկները, որը ևս կնպաստի նրանց հոգատարության ձևավորումը։

Եզրակացություն

Այսպիսով՝ կատարելով այս հետազոտական աշխատանքը ես հասկացա, որ հայրենաճանաչողությունը կարևոր և շատ ծավալուն թեմա է: Եվ մեզանից յուրաքանչյուրը, սկսած դեռ նախադպրոցական տարիքից պետք է երեխաների մեջ սերմանի սեր, հարգանք ու նվիրվածություն հայրենիքի նկատմամբ: Այդ ամենը պետք է արվի ամենօրյա մեր աշխատանքներով, ռինակով ու խորհուրդներով:

Տեղեկացված լինելով մեր հայրենիքի մասին՝ պատմական տարածքներ, տեսարժան վայրեր, հերոսներ, գիտնականներ և շատ այլ դրական կողմեր կձևավորվի սեր հայրենիքի նկատմամբ:

Այս ամենն անցկացվում է տարբեր մեթոդներով, էքսկուրսիաներով, դիտումներով, խաղերով, հայրենասիրական երգերի լսումներով և քննարկումներով:

Խորացնելով մեր հայրենիքի, նրա պատմության և մշակույթի մասին երեխաների իմացությունը, նրանք կդառնան Հայաստանի Հանրապետության ազնիվ, նվիրված, հայրենասեր և պատասխանատու քաղաքացիներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. <<Իմ հայրենիքը 5>> Աշոտ Ղուկասյան, Արսեն Ղուկասյան
2. <<Հայրենագիտություն>> Ա. Հովսեփյան, Ա. Գյուլբուդաղյան, Ն. Տողանյան
3. Երեխաներին դաստիարակել ժողովրդական մշակույթի ավանդույթների վրա / vatman v.p.- Վոլգոգրադ 2008թ.
4. <<Խոսքի զարգացման պարապմունքները մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբում>> մեթոդական ձեռնարկ, Երևան 2014թ., Լալա Սարգսյան
5. Վաչիկ Բրուտյան, <<Հայրենասիրությունը որպես ազգի գաղափարախոսություն>> հոդված
6. Ասյա Հովհաննիսյան <<Նախադպրոցական կրթական համակարգում մանկավարժական գնահատումը>> մեթոդական ուղեցույց, Երևան 2008թ.